Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11002/2024-ՍԳ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 5

1. **Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Շիրակի մարզ |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Ներկայացման օր | 10.01.2025թ |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Թիմ լիդեր |

2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում.
- կենցաղային սպասարկում և խնամք.
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 32 շահառուի Շիրակի մարզի Գյումրի եւ Արթիկ համայնքներում: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է 20 դեպքի վարում (վերափաստագրման իրականացման կազմակերպում ՄՍԾՏԿ-ում, հետվիրահատական քիմիաթերապիայի կազմակերպում):
  Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ. անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:
  Ազատ ժամանցի կազմակերպման շրջանակներում կազմակերպվել է 6 միջոցառում. որոնց մասնակցել են 8 շահառու:
  Հաշվետու ժամանակահատվածում հոգեբանական խորհրդատվություն է ստացել թվով 12 շահառու:
  Տնային սպասարկման բոլոր շահառուները կազմակերպության կողմից ստացել են սննդային փաթեթների տեսքով մեկանգամյա աջակցություն:
- **Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայության տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 32 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների կոմունալ վարձավճարների իրականացման. սննդի կազմակերպման. բարեգործական ճաշարանից կերակրի տուն բերման, անհրաժեշտության դեպքում՝ կերակրման հարցում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, զբոսանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:
- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունայց է իրականացվել 32 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող թվով 6 շահառուի համար պետական պատվերի շրջանակներում տարբեր պոլիկլինիկաներից և բժշակական կենտրոններից ձեռք է բերվել անվճար դեղորայք: 1 շահառու ուղեկցվել է բժշկական տարբեր հաստատություններ՝ հետազոտման, ախտորոշման, բուժման նպատակով: 1 շահառուի համար բուժքրոջ կողմից կատարվել է տնային պայմաններում հետազոտությունների իրականացման կազմակերպում, 1 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա, 4 շահառուի համար կատարվել է միջմկանային ներարկում (շարունակական), 1 շահառուի համար կատարվել է երակային ներարկում (շարունակական): Թվով 1 շահառուի համար կատարվել է անվճար բուժհետազոտության

կազմակերպում՝ ընտանիքի անապահովության միավորի մասին տեղեկանքի առկայությամբ: 4 շահառուի համար կատարվել է դեղորայքային գնումներ, 3 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցրվել է վերջիններիս հսկող բժշկի կողմից նշանակված դեղորայքային բուժման դեղատոմսը և հանձնվել շահառուներին:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրված նյութերից են.

- Տարեցների միջազգային օր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/ivfjml),
- Ծննդյան տոնի նշում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/saxiy),
- Էքսկուրսիա դեպի Դիլիջան (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/ohlpug),
- Էքսկուրսիա դեպի Սառնաղբյուր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/qlszvh):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- ➢ սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում.
- ➢ կենցաղային սպասարկում և խնամք.
- ➢ բժշկական օգնության կազմակերպում:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում Գյումրու համայնքային կենտրոնի սոցիալական աշխատողը մասնակցել է.

- ✓ «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի կողմից կազմակերպած «Տարեցների հետ տարվող սոցիալական խնամք» թեմայով առցանց հանդիպմանը:
- ✓ «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կենտրոնական գրասենյակի կողմից կազմակերպված «Դեպքի վարման մեթոդաբանություն» թեմայով դասընթացին:
- Տնային խնամքի ծառայություն տրամադրող բոլոր աշխատակիցները մասնակցել են «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ կենտրոնական գրասենյակի կողմից կազմակերպված թիմ բիլդինգին՝ ուղղված Կազմակերպության ողջ անձնակազմի թիմային ոգու բարձրացմանը, փորձի փոխանակմանը:

Ձևաչափ

# ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 25/26 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 24 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 6 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 6 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 6 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 20 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա –2<br>Բ - 26 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 26 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 26 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 26 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 4 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 9 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) հոգեբանական խորհրդատվություն | 12 |

Կազմակերպության ղեկավար ___Ե. Մխիթարյան___ «10» 01.2025թ

[illegible]